



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Արարչու Արարչաց

Մատեն

Թիֆլիս 1903


Լայ

396

№145
2000



„Генералъ“ - газетный листъ.





396

ՀՐԱՆՔԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՆԱԿԱՆ



Բ Ա Յ Յ Ի

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՅՈՒՆԸ

(Համառօտ հանրամատչելի տեսութիւն)

ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՍՏՅԵԱՆ

768

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1903

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՊՐԵՍԻ ԱԿՏԻ ՎԵՐԿՆԵՐԸ

Կ Յ Ճ Ս Դ

Дозволено Цензурою. 25 Июля 1903 г. Тифлисъ.



396-2004

4981-59

28-395

Ն Ո Ւ Է Ր

Ի Ազան համարանոց

ևս ընկերական անկեղծ

սիրոյ

ՏԻԳՐԱՆ ԼԱԶԱՐՆԱՆ

Ն Ո Ւ Ր Ա Լ Ե Ա Ն Յ Ի Ն

Հեղինակից:

4917

Ր Ա Յ Ց Ի



Բաֆֆի-Մելիք-Յակոբեանը ծնունել է 1835 թուին Պարսկաստանի՝ Սալմաստ գաւառի—Փայաջուկ գիւղում. նրա հայրը՝ Մելիք Միրզա բէկը եղել է վաճառական և միևնոյն ժամանակ «Թաշիր-բաշի» —վաճառականների ներկայացուցիչ: Նա փորըրիկ Յակոբին տալիս է իրանց գիւղական դպրոցը, որտեղ Սաղմոսից, Աւետարանից ու Նարեկից զատ ոչինչ չէին կարգում:

Հենց այս Տէր-Թօղիկեան դպրոցում երևան է գալիս Բաֆֆու սրամտութիւնը:

Հայրը նկատում է, որ որդին շատ

ընդունակ և սրամիտ է, մտածում է ուղարկել Թիֆլիս, աւելի մեծ ուսում ստանալու, որ գայ և իրան պէտք գայ առևտրական գործերում:

1852 թուին նա ուղարկում է փոքրիկ Յակոբին Թիֆլիս քաղաքը, և յանձնում Բէլախեանց ազգանունով մի ուսուցչի մասնաւոր ուսումնարանը: Այստեղ էլ Բաֆֆին իր լաւ վարք ու բարքի և ընդունակութեան շնորհիւ շատերի ուշադրութիւնը գրաւում է, որ և յետոյ Յակոբին տալիս են գիմնազիա: Նա մեծ ջանասիրութեամբ շարունակում է ուսանել, միևնոյն ժամանակ հետաքրքրուելով զանազան կլասիկ հեղինակներով: Օրինակ նա շատ էր գրաւուած Հոմերոսի Իլիականով ու Ոդիսականով, Օվիդիոսի և Վիրգիլիոսի զրուածքներով և յետագաներում ուսումնասիրում էր Փօրթ-Ջանդի, Էօթէն-Սիւի, Ալ. Դիւմայի, Հիւգօյի և ուրիշների զրուածքները:

Բայց հայրը լինելով ծեր վաճառական և նուիրուած իր գործին, 1857 թուին Յակոբին հանում է գիմնազիայի 5-րդ դասարանից և տանում է գիւղ ու ստիպում վա-

ճառականութեամբ զբաղուել, և իրան օգնել: Բայց երիտասարդ Յակոբի մէջ եղած ձգտումը դէպի ուսումը և կրթութիւնը հանգիստ չեն տալիս նրան: Վաճառականական շոր ու ցամաք հաշիւները, առուտուրի պարտաւորական ձեւերը սնունդ չին մատակարարում նրա շրջահայեաց ու բեղմնաւոր ուղեղին: Նա իր համար մի փոքրիկ գրադարան է կազմում և սկսում ուսումնասիրել եզած գրքերը: Փոքր ինչ յետոյ նա թողնելով վաճառականութիւնը, սկսում է ճանապարհորդել Թիւրքիայի և Պարսկաստանի զանազան գաւառներում — Վան, Տարօն, Մուշ, Դիւան, Խօյ, Ուրմի, Թաւրիզ և այլն... հետաքրքրուելով և ուսումնասիրելով պատմական նշանակութիւն ունեցող տեղերն ու մնացորդները: Եւ իզուր չէ անցնում այս առաջին ճանապարհորդութիւնը, նա հրատարակում է իր տպաւորութիւնները 1860 թ. «Հիւսիսօսփայլում» «Աղթամարայ վանք» վերնագրով, որը մի իրական նկարագրութիւն է թէ տեղի և թէ հոգևորականութեան նիստ ու կացի: Սա թէև մի յաջող զրուածք չէ,

բայց այնուամենայնիւ իր մէջ արտայտ-
լեցնում է սկնակ գրողի ապագայ փառաւոր
գործունէութեան սկիզբը:

Եւ նա շարունակ հետաքրքրում է օ-
տար գրականութեամբ, կարդում է ու զար-
գանում: Հետզհետէ սկսում է աշխատակցել
ժամանակի հայոց թերթերին, թագցնելով
խսկական ազգանունը և ստորագրուելով
«Բաֆֆի» ու «Մելիրզադէ» ծածկանուն-
ներով: Զանազան աննպաստ, ծանր հան-
գամանքները հարկադրում են Բաֆֆուն նո-
րից վաճառականութեամբ զբաղուել: Ապա
ուսուցչութիւն է անում Վերին-Ազուլիսում,
Թաւրիզում, Թիֆլիսում և այլ տեղերում:
Միևնոյն ժամանակ չքաւորութիւնը ստուե-
րի նման հետևում էր երիտասարդ ուսուց-
չին և գրողին, և մի ժամանակ էլ այն աս-
տիճան, որ Բաֆֆին ստիպուած է լինում
իր կոչումից ստոր պաշտօն յանձն առնել:

«Ինչո՞ւ թագցնեմ, պատմում է Բաֆֆին
իր բարեկամ ծանօթ պ. Ա. Ալթանդիլեան-
ցին,—ես այն աստիճան հացի կարօտ մնացի
Թիֆլիսում, որ օրուայ կարիքն ինձ ստի-
պեց մի հասարակ գործակատարի պաշտօն

ընդունել մի մագաղինում, այն էլ ոչ թէ
խսկական գործակատարի, այլ պարզապէս
մի դուքանչու աշակերտի պաշտօն. մի շըն-
չին ռոճիկով: Օրուայ հացս գտնելու հա-
մար յանձն առայ այդ ստորութիւնը...:
Մագաղինում պատրաստի հագուստներ է-
ինք վաճառում, ես շորերը հագցնում էի
յաճախորդներին, քղանցքներից բռնելով,
քաշըչելով յարմարացնում էի և սուտ գո-
վաբանութիւններ էի անում, որ մուշտա-
րուն ձեռիցս չը փախցնեմ: Մի անգամ մի
երիտասարդ ծանօթի միջանի իրեղէններ
նիսիա էի վաճառել. այդ օրը քիչ էր մը-
նում, որ ինձ մագաղինից դուրս վռնդէին:
Ա՛խ, .. ի՞նչ զգուելի պաշտօն էր այդ և որ-
քան անտանելի...»: Այնուհետև, երբ ծա-
նօթանում է Գրիգոր Արծրունու հետ, նրա
դրութիւնը փոքր ինչ բարւոքում է:

Բաֆֆիի մտքի առաջադիմութեան գարկ
է տալիս Արծրունին—ժամանակակից յայտ-
նի հրապարակախօսը և գործիչը, Ինչպէս
ինքը՝ Գրիգոր Արծրունին ասում է, 1871
թուին նոր էր իրաւունք ստացել «Մշակ»
անունով թերթ հրատարակելու, երբ Սենե-

քերիմ Արծրունու միջնորդութեամբ ծանօթանում է Բաֆֆու հետ, որը հենց առաջին անգամից լաւ տպաւորութիւն է թողնում նրա վրայ: Ապա սա՛ Արծրունին՝ հրաւիրում է Բաֆֆուն աշխատակցելու իր թերթին: Այս ժամանակից սկսած մինչև 1885 թուականը Բաֆֆին «Մելիքզադէ» և «Բաֆֆի» անուններով մասնակցում է «Մշակին», միաժամանակ աշխատակցելով «Աղբիւրին» ապա «Արձագանքին», «Փորձին», տալով վիպական, ճանապարհորդական, նկարագրական ու հրապարակախօսական յօդուածներ:

1874 թուին Անդրէաս Յովհաննիսեանց եպիսկոպոսը՝ նշանակուելով Ատրպատականի թեմակալ առաջնորդ, սկսում է ուշադրութիւնը կենտրոնացնել Թաւրիզի հայոց թեմական դպրոցի վրայ, նրա կրթական ծրագիրը ընդլայնելով ու ճոխացնելով: Հրաւիրում է նոր ուսուցիչներ, ի միջի այլոց և Բաֆֆիին: Հենց ուսուցչութեան ասպարիզում նա սկսում է եռանդուն գործունէութիւն ցոյց տալ, նոր սերնդին կրթել ազնիւ ոգով, նորանոր իղէալներ ներշնչել:

Այդ ժիր, գաղափարական ուսուցիչը, չը նայելով որ ցերեկային դպրոցական աշխատանքներից յոգնած էր լինում, այնուամենայնիւ գիշերները անխոնջ աշխատում էր գրելով ու հեղինակելով: Աստիճանաբար խաւարամիտ մարդկանցից կազմուեց նրան ընդիմադիր մի լէզէօն, որ ամեն կերպ սկսեց հալածել նրան, և վերջ ի վերջոյ յաղթանակը տարաւ, հեռացնելով Բաֆֆիին ուսուցչութեան պաշտօնից: Անողոր ճակատագրից գրողների համար սահմանած արկարութիւնը—կրծքացաւը՝ վաղաժամ երեւան է գալիս նրա օրգանիզմի մէջ և սկսում մաշել. — «Թէև իմ կուրծքս իմ գերեզման իջնելու սանդուղքներն է պատրաստում, ասում է նա իր վերոյիշեալ ընկերակցին, — բայց ինձ թւում է, որ դեռ միքանի տարիներ էլ կ'ապրեմ: Ինձանում արդէն մարմին ու միտ է դարձել գրելը՝ որ իմ առողջութիւնն աւելի է խախտում, բայց ես չեմ կարող իմ միանգամ սկսածը բաց թողնել: Մեր նոր սերունդն ընթերցանութեան գրքեր չ'ունի, ասում է նա. — անցել է «Նրազահան» և «Գղնձէ բաղաբի» և դրանց նը-

ման զըրբերով պարապելու ժամանակը, ես մեր նոր սերնդին ուշադրաւ ու միտք մշակող նոր վէպեր, նոր պատմական վէպեր պէտք է տամ, որքան էլ կը ներեն իմ ոյժերը. թող աւելի բարձր գրուածքները, բարձր վէպերը գրեն նրանք, որոնք աւելի բարձր ուսում են ստացել.....»:

Համաշխարհային գրականութեան սլաւոնութիւններէ էջերում անշեղ կերպով սկզբից մինչև վերջ առաջ է գնում այն գառն իրականութեան պատմութիւնը, — որ բոլոր ազգերի մէջ ամեն մի բեղմնաւոր նոր գրողի դէմ դուրս են գալիս գրական ոխերիմ հակառակորդներ, որոնք քար են գլորում նոր տաղանդի առաջ, բամբաստում նրան, հալածում, ուզենալով տապալել, մեռցնել նորածիլ տաղանդը և հեռացնել ասպարէզից: Բաֆֆին էլ ենթարկուել է նոյն դուրսութեան, նա էլ ունեցել է հակառակորդներ լէգէօններ թէ տղէտ և թէ կրթուած հայ խաւերի մէջ: Բաւական է առաջ բերել հինց իր խօսքերը, որ ասել է պ. Ս. Ս. թանգիլեանցին և ընթերցողը կը պատկերացնի երիտասարդ գրող Բաֆֆիի սկզբնական շըր-

ջանները. — «Ես այժմ համոզուեցի, որ մեր երկիրը բնաւ յարմարութիւն չ'ունի գրական գործիչի և ուսուցչի համար: Չը կայ լաւ շրջան, չը կան կրթիչ և հրահանգիչ հաստատութիւններ, որոնցից մարդս կարողանար օգտուել: Ոչինչ չը կայ նպաստող, լաւ տրամադրութիւնն էլ, ինչպէս գիտէք, այստեղ շատ սակաւ կարող է լինել: Երբ ես մտքով խորասուզուած եմ լինում մի բան գրելու համար, յանկարծ տեսնում էք, հանդիստս վրդովելով, կտրեցին մտածութեանս թիւր, որին այլ ես չեմ կարող վերադառնալ և նա յաւիտեան կորաւ. ինձ համար: Հարկաւոր է լինում մի աջող դէպք, որից ես նոր ի նորոյ ոգևորուեմ, բայց դրա փոխարէն առաջ է գալիս մի թշուառ կրեցիթ, մի խայտառակ դէպք կամ մի զբոսնալի դործ: Ոչ մի դէպքում հանդիստ չեմ գտնում. ինչ թշուառ եմ ես...: Սյդպէս է գրած իմ բաղտում»:

Բաֆֆիի ժամանակ հայոց գրականութիւնը զեռ նոր էր սկսել թողնել դարևոր սխօլաստիկ ոգին, կրօնական-վերացական անհեթեթ գաղափարները, դաւանաբանա-

կան ջրալի ու անպէտք վիճաբանութիւնները, ու ընկել էր Եւրոպական վերածընուած՝ նոր գրականութեան հոսանքի մէջ: Նազարեանցն ու Նալբանդեանցն էին, որ առաջին անգամ մեծամեծ դժուարութեանց յաղթելով, Եւրոպայի լուսաւորութեան ջահերից տարան Հայաստան և լուսաւորեցին հայոց խաւար գրականութեան ասպարէզը. նրանք առաջինները եղան, որ գրականապէս վճռեցին թօթափել գրաբարի լուծը և տալ ժողովրդին մի նոր, պարզ, ամենքին հասկանալի լեզու—այսինքն աշխարհաբար: Նազարեանցն իր «Հիւսիսափայլով» գրեց այդ մեծ գործի սկիզբը, և ապա շարունակեցին նրա արժանաւոր յաջորդ Նալբանդեանցն և ժամանակակից հայ գործիչներ: Այդ լծի տակ է մտնում և Բաֆֆին իր գօրեղ գրչով:

Առաջին անգամ Բաֆֆին գգում է ազգային վիպասանութեան բացակայութիւնը հայոց գրականութեան ասպարէզում: Այդ բանը դեռ ոչ ոք չէր զգացել, գուցէ և միքանիսը զգացել էին, բայց նրանց ոյժերից վեր էր պատմական վիպասանութիւն տալը: Չը

կային ազգային հերոսներ, չը կային գեղարուեստական գրուածքներ՝ ազգայնական ինքնուրոյն կեանքից. այլ միայն՝ հայերը՝ մտքի աչքերը բանալով՝ աշխատում էին փոխ առնել օտարի գրականութիւնը, նրա հերոսներն ու գրուածքները:

Բաֆֆին ոչ միայն օգտուեց, փոխ առաւ օտար՝ անհամեմատ ծաղկեալ գրականութիւնից, այլ և աշխատեց մայրենի, ազգային գրականութիւն էլ ստեղծել, փառաւոր անցեալի մեծագործ հերոսներից վէպեր կազմել և օտար գրականութեան հետ այդ էլ տալ կարգալու հայ սերնդին: Եւ ահա նա ժրաշան կերպով սկսում է ուսումնասիրել հայկական կեանքի թէ անցեալը և թէ ներկան:

Բաֆֆին գրում և գրում է անընդհատ: Պարսկաստանում և Թիւրքիայում կատարած ճանապարհորդութիւնները, նրա վէպերի համար տալիս են բաւականին տիպեր: Բաֆֆին լինելով չափազանց զգայուն, նա չէր կարողանում սառնասրտութեամբ տեսնել իր շուրջը մնացած ազգային պատմական բեկորները և յիշատակարանները:

նա աւելի ու աւելի հետաքրքրուում է իր հայրենիքի, ազգի փառաւոր անցեալով, յուզուում է նրանց տպաւորութեանց տակ ու գրում է բանաստեղծութիւններ, որոնց մէջ նա երգում է ազգի հին ու նոր ցաւերից, անցեալ փառքը, ստրկութիւնն ու հեծեծանքը և երազում է նրանց վերակենդանացնելու մասին. արծարծելով իր զբոսաւորներում ազգասիրական և եղբայրական գաղափարներ:

Ո՞ր հայը չէ լսել «Չայն տուր ո՞վ ծովակ» յուզող երգը, որ Բաֆֆին գրել է Վանայ ծովակի ափին նստած ժամանակ՝ ազգի փառաւոր անցեալի յիշողութիւնների ազդեցութեան տակ:


Նա չնորհիւ իր թափանցիկ խելքի ու շրջահայեաց մտքի, մտնում է հասարակութեան խաւերը. դիտում ու գննում ժողովրդի ներկայ վարք ու բարքը, սովորութիւնները և տեսնում է, որ դեռ շատ տրդէտ է հայ ժողովուրդը. տեսնում է, որ նրա վարք ու բարքը փշացած է, նիստ ու կացը դէպի վատը փոխուած. լսում է հայ ժողովրդի դառն հեծեծանքները ու հարըս-

տահարութիւնները Տաճկաստանում և Պարսկաստանում, տեսնում է հայ կուսի բռնաբարուիլը, հայ հոգևորականների կոշումից ստորանալը, հայի համբալկութիւնը մայրենի լեզուի մէջ և այլն... ազգի ցաւերը, և յուզում է Բաֆֆին, զգացում. նա մտածում է նոր ծրագիրներ և իրաջանքեր գնել հայ ժողովրդի առաջ. մանաւանդ հայ ինտելիգենցիայի և երիտասարդութեան առաջ: Ուստի և Բաֆֆու բոլոր գրուածքները տպաւորիչ են:

Տաճկահայոց և պարսկահայոց ողբալի դրութիւնը, հալածանքները, հարստահարութիւնները, սովամահ լինելը, ապա ռուստաճկական պատերազմը տեսնելը տուին Բաֆֆու վէպերին: Սյոգ տպաւորութիւնների տակ նա գրել է «Ջալալէդինը», «Խենթը», «Դաւիթ-բէկը», «Սամուէլը», «Գայծեւրը», «Խամսայի Մելիքութիւնները»...:

Ո՞վ չէ ճանաչում Բաֆֆու հերոսներին — Դաւիթ-բէկին, Մելիք-Փարսաղանին, տէր-Սւետիքին, Վարդանին, Որսորդ Աւոյին, Գարոյին, Ասլանին, Սագոյին կամ թէ խաչազող քաւոր Պետրոսին և ուրիշներին, որոն-

396-2009
105-1861



ցից ամեն մէկը իղէալ է, հերոս է և կամ
ժամանակի ծնունդ. Բաֆֆին այդ գրուածք-
ներով ոգևորում է ժամանակակից անգործ
թմրած երիտասարդութեանը, խրախու-
սում է նրան, յորդորում է հետևիլ իր հե-
րոսներին, տալիս է նոր հայեցումներ, գոր-
ծելու եղանակ ու միջոց:

Այդ հերոսները մասամբ իրականից են
վերցրած և մասամբ էլ նրա վառ երևակա-
յութեան արտադրութիւններն են. Գուցէ
թէ նրա վէպերում լինեն պատմական չա-
փազանցութիւններ, պատմական անճշտու-
թիւններ, բայց դրանք չեն նսեմացնում
գրուածքների արժանաւորութիւնները, և
նոյն իսկ չնչին ստուեր անգամ չեն կարող
զցել նրանց վրայ, քանի որ Բաֆֆին բարձր
կրթութիւն չունէր, պատմաբան չէր և թէ
նա անցեալի բեկորներից ու ժողովրդական
աւանդութիւններից է վերցրել պատմական
մասերը: Նրա վէպերն այնքան սահուն են,
այնքան հետաքրքիր ու յափշտակող, որ ոչ
մի թերութիւն աչքի չէ ընկնում ընթեր-
ցանութեան ժամանակ, այլ ընդհակառակն,
ոգևորում է ընթերցողին:

Նա աշխատում է միաժամանակ աշ-
խարհաբար լեզուն մարբել գրաբարի խըրթ-
նութիւններից, ժողովրդական տգէտ դար-
ձուածքներից, կոկեղ նրան և դարձնել
սահուն լեզու: Եւ այդ էլ բաւականին յա-
ջողուել է նրան: Ահա թէ ինչ է ասում
Գրիգոր Արծրունին վերոյիշեալ գրուածք-
ների մասին: « Վերցնենք նրա
«գրուածքները, որոնք հռչակեցին հայերի
«մէջ Բաֆֆիի անունը և կը համոզուենք, որ
«նրա ամենալաւ գրուածքների՝ «Ջալալ-էդ-
«դին», «Խէնթ», «Իւալիթ-բէկ» «Վայծեր»—
«վերնագրով հեղինակութիւնների մէջ միայն
«բնութեան նկարագրութիւնը, վէպի նկա-
«րագրական կողմը, ժողովրդական կեանքի,
«ժողովրդի կենցաղավարութեան նկարագի-
«րը վերին աստիճանի ընթացական իրական
«են: Գործող տիպերի մի մասը միայն՝ այն
«է վատ տիպերի նկարագիրը, թէպէտ և
«զուցէ գիտամար փոքր ինչ չափազանցրած
է, բայց այնուամենայնիւ կատարելապէս
ընթացական է, իսկ Բաֆֆիի գրուածքների
«գլխաւոր նպատակը մի ձգտում է, մի
«տեսնդենցիա է—ներկայացնել այն կեանքը,

«որ չը կայ, բայց որ պէտք է լինէր այն «տիպերը, որոնք մեզանում դժբախտապէս «չը կան, բայց որոնց գոյութիւնը ցանկալի «է մեր մէջ».....

Նա գործում է գրականական և հասարակական ասպարէզում ամբողջ երեսուն տարի, անընդհատ աշխատելով մայրենի գրականութեան ու լեզուի, ազգային շահերի ու առաջադիմութեան համար. շարունակ մտրակելով ինտելիգենցիայի անզոր-ծութիւնը, երիտասարդութեան դատարկութիւնը, հոգևորականութեան դայթակղէցուցիչ յետադիմութիւնը ու ախտեղութիւնը, և գրիչը ձեռին հարթում է նոր ճանապարհ՝ առաջադիմութեան ճանապարհ, վէպերի տիպերով և հերոսներով ցոյց տալով իսկական գործիչ լինելու պատկերը և ազգային ինքնագիտակցութեան անհրաժեշտութիւնը... .

Ահա Րաֆֆու գրուածքների տեղեկացիան, ահա Րաֆֆու գործունէութեան մեծ նշանակութիւնը:

Րաֆֆին կնքում է իր մահկանացուն 1888 թ. Ապրիլի 24-ին, ի մեծ ցաւ և կո-

րուտ հայոց աղքատ գրականութեան. հայ ազգը յանձին Րաֆֆիի՝ զրկուեց իր առաջնակարգ, տաղանդաւոր վիպադրողից, հայ մամուլը ողբաց իր կորուստը, հառաչեց: Նրա թերթերում գրուեցան նեկրոլոգներ, ճոճոան դամբանականներ: Հայ ժողովուրդը իր մեծ սուզը ցոյց տալու համար պրսակներով զարդարեց մեծ զրոյի սգակառքը և յուզարկաւորութեանը հետեց մինչև հանգստարան: Հայ հարուստը, որ նրա կենդանութեան ժամանակ չէր ուզում ճանաչել նրան, որ մի գուցէ նրա գրուածքների հրատարակութեան համար փող ծախսէ, նրա մահուան ժամանակ գլխիկօր հետևում էր սգակառքին:

Եւ եթէ Րաֆֆին այն լուսալէին մի ըուպէ կենդանանար, զլուխը դազարի միջից վեր բարձրացնէր, սաստիկ կը զարմանար, տեսնելով, որ իր համակրողների թիւը տասնապատկուել է և նոյն իսկ թշնամիներն էլ են գլխիկօր հետևում սգահանդէսին և կ'ասէր. «Կենդանի ժամանակս չէիք ուզում ինձ ճանաչել, քաղցած ժամանակս մի կտոր հաց անգամ չը տուիք, որ ստիպ-

ուած եղայ բազազի պրիկաշչիկ գառնալ. ամեն տեղից չարաչար հալածում էիք, այժմ ինչո՞ւ էք եկել, ինձ յարգելո՞ւ. ծաղրո՞ւմ էք, ի՞նչ է. . .»:

Այո՛, այսպէս է մեր հայերիս մէջ. . . . ունեցած ժամանակ շինք զբահատում, կորցնելուց յետոյ ենք միայն ավստոսում. . . .

Բայց ֆիզիքական մահը դեռ վերջնական մահ չէ նշանակում: Կան գործեր, որ անմահացնում են մարդուն՝ մարդոց յիշողութեան մէջ ժամանակի ընթացքի հետ առաջ գնալով: Բաֆֆիի գրուածքների ստուար քանակութիւնը և նրանց որակութիւնը մնում են որպէս անխորտակելի արձաններ նրա գերեզմանի համար և հեղինակին դասում են անցեալ տաղանդների շարքին: Ամեն մի հայ, շինականից սկսած մինչև քաղաքակրթուած ու զարգացած ինտելիգենտը, կարդում է ու կը կարդայ դեռ երկար ժամանակ Բաֆֆի վէպերն ու պատկերները, յափշտակուելով ու ոգևորուելով նրանց մէջ եղած տիպերով և զաղափարներով. . . .

Բաֆֆիի տաղանդը գնահատել են ոչ

միայն հայերը, այլ և օտարազգիները. վրաց մամուլն էլ իր կողմից նեկրոլոգներ նուիրեց նրա մահուան առթիւ: Որպէս զի Բաֆֆիին մօտ ծանօթացնէ վրացիների հետ, սկսեց տպել Բաֆֆիի միքանի գրուածքների թարգմանութիւնները:

Ռուս գրականութեան հետ Բաֆֆիին ծանօթացրել է ռուս կին գրող Ե. Նեկրասովան, բաւականին յաջող կերպով որոշելով Բաֆֆիի գրուածքների արժանաւորութիւնը, բերելով նմուշներ նրա միքանի վէպերից:

Բաֆֆիի պտղաբեր գործունէութեան հետ ծանօթացնելու համար առաջ ենք բերում նրա գրուածքների ցուցակը համարեա մտրոզովին:

«Մի օրավար հող», «Սով», «Կուսազըրութիւն», «Անբաղդ Հուփսիմէ», «Բառեր» (թարգմ.), «Բիբի շարաբանի», «Պարոյր Հայկազն», «Խագ-փուշեր», «Ղարիբ Մշեցի», «Խենթը», «Դաւիթ-բէկ», «Խամսայի Մելիքութիւնները», «Ոսկի արագաղ» (թարգմ.), «Զալալէղին», «Խաչագողի յիշատակարանը», «Կայէնի կտակը» (թարգմ.), «Կայծեր»,

«Մալբի», «Զահրումար», «Թաթոսներ» «Մի
նը այսպէս, միւսն այնպէս», «Մի թերթ
արեղայի յիշատակարանից», «Հայ կինը և
հայ երիտասարդութիւնը», «Քրդական միութիւն», «Քրդեր», «Աղթամարայ վանքը»,
«Մի քանի գծեր Խրիմեանի կեանքից»,
«Վրաց իշխանագն Ալէքսանդր», «Միրզա-
Մելքում խան», «Ուղեորութիւն Պարսկաս-
տանում», «Թիֆլիսից մինչև Ազուլիս»,
«Մարդը գոյութեան կռուի մզջ», «Ինչ կապ
կայ մեր և թուրքաց հայերի մէջ», «Քանդը-
ված օջախ» «Քնար մշեցոյ», «Գաղտնիք
Ղարաբաղի», «Թիւրքիայի հայոց վիճակը»,
«Սամուէլ», «Փունջ», «Վէպիկներ և սլատ-
կերներ» և ուրիշ անթիւ պուրլիցիստական
յօդուածներ զանազան թերթերում: Բաֆ-
ֆին, ինչպէս ասում են, ունի և անտիպ
գլուածքներ, որոնք նրա կենդանութեան
ժամանակ չը տպուեցան. իսկ այժմ տնու-
շաղիր են թողած և գուցէ անյայտացել են:



ՀՀ Ազգային գրադարան



NL0585698

